Հաստատված է
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի
2023 թ. մարտի 23-ի թիվ 9 նիստում

ԳԽ նախագահ _____ Հ. Հովհաննիսյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ 6

2.1. Մշտադիտարկման նպատակն ու խնդիրները 6
2.2. Մշտադիտարկման ընթացակարգը 7

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ 10

3.1. Ծրագրերի վերանայման նպատակն ու խնդիրները 10
3.2. Ծրագրերի վերանայման ընթացակարգը 11

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 13

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ 14

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 25

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 25

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ 27

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԴԱՍԱԽՈՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ 28

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԽ – գիտական խորհուրդ

ԳԽ ՈԱՄՀ – ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ԿԾ – կրթական ծրագիր

ԿՎ – կրթական վերջնարդյունք

ՄԽ – մշտադիտարկման (մոնիթորինգի) խումբ

ՄՀ – մշտադիտարկման (մոնիթորինգի) հաշվետվություն

ՈԱԿ – Որակի ապահովման կենտրոն

ՈՒՍ – ուսումնական ստորաբաժանում

ՈՒՍՈԱՀ – ՈՒՍ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողով

ՖԽՀ – ֆոկուսխմբային հետազոտություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգը (այսուհետ՝ կարգ) կանոնակարգում է բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները:
2. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի վերահսկման, ապահովման ու շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից են:
3. Կարգը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման նպատակներն ու խնդիրները, դրանց ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին ու համապատասխան ժամանակացույցները:
4. Կարգը տրամադրում է նաև կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման հաշվետվության ձևաթերթը, որում ներառված են հաշվետվության հիմնական բաժիններն ու ծրագրի կատարողականի արդյունքային ցուցանիշների կազմը:
5. Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումն իրականացնում են ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումները (ՈՒՍ՝ ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ)՝ բակալավրի ծրագրերի համար հնգամյա, իսկ մագիստրոսի ծրագրերի համար՝ եռամյա պարբերականությամբ:
6. Կրթական ծրագրերի պարբերական վերանայումը համաբուհական գործընթաց է, որի իրականացման պարբերականությունը որոշվում է սույն կարգով՝ հիմք ընդունելով ծրագրի կրթական մակարդակը (բակալավր/մագիստրոս), բնույթն (ակադեմիական/կիրառական) ու մասնագիտական ոլորտը:
7. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման հաշվետվության ձևաթերթը ներկայացված է Հավելված 1-ում, ընթացակարգի սխեման՝ Հավելված 2-ում, իսկ ժամանակացույցը՝ Հավելված 3-ում:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

2.1. Մշտադիտարկման նպատակն ու խնդիրները

8. Կրթական ծրագրերի մշտադիտարկումը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի իրականացման որակն ու համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին ու կրթական վերջնարդյունքներին: Մշտադիտարկման արդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:
9. Մշտադիտարկման խնդիրներն են.
   - գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակների ու ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը,
   - գնահատել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների համապատասխանությունը կրթական վերջնարդյունքներին և կրթական արդի պահանջներին, բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները,
   - բացահայտել և վեր հանել ծրագրի ուժեղ ու թույլ կողմերը, թերություններն ու բացթողումները, իրականացման դժվարությունները՝ առաջարկելով անհրաժեշտ միջոցառումներ ծրագրի ու բաղկացուցիչ դասընթացների բարելավման համար,
   - վերլուծել ծրագրի քանակական ու որակական հիմնական բնութագրերը՝ արդյունքային ցուցանիշները (ընդունելություն, համակազմ, հեռացումներ, առաջադիմություն, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակ, ուսանողների բավարարվածություն, շրջանավարտների զբաղվածություն և այլն) ու գնահատել որակի անկման միտումները, եթե այդպիսիք կան,
   - գնահատել կրթական ծրագրի որակի բարելավման նախորդ պլանի կատարողականը,
   - մշակել ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ու գործողությունների նոր պլան և ապահովել վերջինիս կատարումը:
10. Կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է ուսումնական ստորաբաժանումներում (ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ) բակալավրի ու

մագիստրոսի բոլոր գործող կրթական ծրագրերի համար, որոնք ունեն շրջանավարտներ:

2.2. Մշտադիտարկման ընթացակարգը

11. Կրթական ծրագրի մշտադիտարկումն իրականացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը ծրագրի կրթական մակարդակի համար սահմանված պարբերականությամբ: Գործընթացը մեկնարկում է ռեկտորի հրամանով ու իրականացվում սահմանված ժամանակացույցով[1]:
12. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլտետի դեկան, կենտրոնի կամ ինստիտուտի տնօրեն) մշտադիտարկումն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ձևավորում է մշտադիտարկման խումբ (ՄԽ):
13. ՄԽ-ն բաղկացած է 6 անդամից՝ խմբի ղեկավար, 2 դասախոս, 2 ուսանող և 1 գործատու: Խմբի ղեկավարը տվյալ կրթական ծրագրի ղեկավարն է, որը ծրագրի իրականացման համար առանցքային դերակատարություն ունեցող դասախոսների կազմից առաջադրում է երկու անդամի: Խմբում պարտադիր ընդգրկվում են նաև ծրագրի ավարտական կուրսում սովորող, բարձր առաջադիմություն ունեցող երկու ուսանող ու հիմնական գործատու կազմակերպության 1 ներկայացուցիչ (ցանկալի է՝ վերջինս ներգրավված չլինի տվյալ ծրագրի իրականացման գործընթացում): Վերջիններիս առաջադրում է ուսումնական ստորաբաժանման ղեկավարը:
14. ՄԽ-ն առաջնորդվում է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման սույն ընթացակարգով ու հաստատված ժամանակացույցով:
15. Գործընթացն սկսվում է նախորդ մշտադիտարկումից հետո կրթական ծրագրի իրականացման տվյալներից ստացված արդյունքային ցուցանիշների սահմանված կազմի հավաքագրմամբ ու վերլուծությամբ, ինչպես նաև նախորդ մշտադիտարկման բարելավման պլանի կատարողականի գնահատմամբ:
16. ՄԽ-ն մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմում է կրթական ծրագրի մշտադիտարկման հաշվետվությունը (ՄՀ)՝ ըստ համապատասխան ձևաթերթի (տե՛ս Հավելված 1):

---

[1] ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման ընթացակարգի սխեման ներկայացված է Հավելված 2-ում, իսկ համապատասխան պայմանական ժամանակացույցը՝ Հավելված 3-ում:

17. ՄՀ-ն ներառում է ծրագրի նախորդ մշտադիտարկման տվյալների հիման վրա կազմված բարելավման պլանի կատարողականի գնահատումն ըստ սահմանված ցուցիչների, ինչպես նաև ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի նախագիծը հաջորդ շրջափուլի համար:
18. ՄԽ ղեկավարը ՄՀ-ն ու կից փաստաթղթերը ներկայացնում է ուսումնական ստորաբաժանման (ՈՒՍ՝ ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի (ՈՒՍՈԱՀ) դիտարկմանը, որը համապատասխան եզրակացությամբ դրանք ներկայացնում է ՈՒՍ ղեկավարին:
19. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը, հիմք ընդունելով ներկայացված մշտադիտարկման առանձին հաշվետվությունների արդյունքները, կազմում է իր ղեկավարած ստորաբաժանման բոլոր կրթական ծրագրերի մշտադիտարկման ամփոփիչ հաշվետվությունը և այն ներկայացնում ՈՒՍ գիտական խորհրդի դիտարկմանը:
20. ՈՒՍ գիտական խորհուրդը քննարկում է մշտադիտարկման ամփոփիչ հաշվետ-վությունը և ընդունում համապատասխան որոշում, որը ներառում է՝
    - նախորդ մշտադիտարկման տվյալների հիման վրա կազմված որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանների կատարողականի գնահատականը,
    - հաջորդ երկու ուսումնական տարիների ընթացքում ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների նոր պլանները, որոնք պետք է կատարվեն ՈՒՍ-ներում ու ամբիոններում,
    - ԵՊՀ վարչակազմին հասցեագրվող հիմնախնդիրները/հարցերը,
    - կրթական ծրագրերի մշտադիտարկման իրականացման ընդհանուր գնահատականը:
21. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը ստորաբաժանման կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները, ամփոփ հաշվետվությունն ու ֆակուլտետի գիտական խորհրդի (ղեկավարության նիստի) ընդունած որոշումը ներկայացնում է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) դիտարկմանը:
22. ՈԱԿ-ը ստուգում է ստորաբաժանումներից ստացված մոնիթորինգի հաշվետ-վությունների ու կից փաստաթղթերի՝ սահմանված պահանջներին համապա-տասխանությունը: Անհամապատասխանության դեպքում դրանք վերադարձ-վում են ուսումնական ստորաբաժանմանը վերանայման համար:

23. Ներկայացված հաշվետվությունների վերլուծության հիման վրա ՈԱԿ-ը պատրաստում է ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման համապարփակ զեկույցը, որը հիմք է՝ ՈԱԿ-ի կողմից կրթական ծրագրերի բարելավման պլանների իրականացումը վերահսկելու համար:
24. Մշտադիտարկման հատուկ ընթացակարգ է կիրառվում ռիսկային բնույթի կրթական ծրագրերի հետևյալ խմբերի համար.
    - նոր գործարկվող (իրականացման առաջին շրջափուլում գտնվող) ծրագրեր,
    - ծրագրեր, որոնք բացասական եզրակացություն են ստացել նախորդ մշտադիտարկման, պարբերական վերանայման կամ որակի արտաքին գնահատման/հավատարմագրման իրականացման ընթացքում,
    - ծրագրեր, որոնց վերաբերյալ ուսանողական հարցումները, շրջանավարտների բավարարվածության հարցումներն ու ֆոկուսխմբային հետազոտությունները (ՖԽՀ) արձանագրում են կրկնվող ցածր գնահատականներ,
    - ընդունելության, ռեսուրսային ապահովվածության և/կամ ուսումնական առաջադիմության կրկնվող ցածր ցուցանիշներով ծրագրեր:
25. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի մշտադիտարկումը նույնպես իրականացվում է սույն ընթացակարգով, սակայն կարճ պարբերականությամբ (երեք ու երկու տարին մեկ՝ համապատասխանաբար բակալավրի ու մագիստրոսի ծրագրերի համար): ՈԱԿ-ի զեկույցում առանձին կետով ներկայացվում է այդ ծրագրերը շարունակելու, վերանայելու կամ դադարեցնելու վերաբերյալ առաջարկություն:
26. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի մշտադիտարկման համապարփակ զեկույցը քննարկում է ԵՊՀ գիտական խորհուրդը:
27. Գիտական խորհուրդը, հիմնվելով ՈԱԿ-ի եզրակացությունների ու քննարկման արդյունքների վրա, ռիսկային համարվող կրթական ծրագրերի համար ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
    - ելնելով մշտադիտարկման արդյունքներից՝ կրթական ծրագիրը գնահատել բավարար ու շարունակել այն՝ միաժամանակ իրականացնելով մշտադիտարկման տվյալների հիման վրա մշակված որակի բարելավման գործողությունների պլանը,

- ելնելով մշտադիտարկման արդյունքներից՝ կրթական ծրագիրը համարել պայմանական բավարար ու հանձնարարել ուսումնական ստորաբաժանմանը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տրված ժամկետում շտկելու թերությունները կամ վերանայելու ծրագիրը,
- ելնելով մշտադիտարկման արդյունքներից՝ ծրագիրը գնահատել անբավարար և սկսել դրա դադարեցման գործընթացը:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

3.1. Ծրագրերի վերանայման նպատակն ու խնդիրները

28. Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է ծրագրի իրականացման մի քանի շրջափուլերի արդյունքների հիման վրա գնահատել նրա արդիականությունը (ծրագրի նպատակների համապատասխանությունը աշխատաշուկայի արդի պահանջներին), շարունակման հիմնավորվածությունը (սոցիալական կարիքի առկայությունը՝ պահանջարկն աշխատաշուկայի ու ուսանողների կողմից), իրականացման փաստացի որակը, ինչպես նաև ընդունել որոշում ծրագրի հետագա շարունակման նպատակահարմարության կամ էական փոփոխությունների վերաբերյալ:
29. Վերանայման հիմնական խնդիրներն են.
    - վերագնահատել կրթական ծրագրի արդիականությունն ու պահանջարկը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը, դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը և այլն,
    - ուսումնասիրել կրթական ծրագրում ներգրավված ուսանողների ու շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև հիմնական գործատուների բավարարվածությունը ծրագրի շրջանավարտներից,
    - հաշվի առնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ որակավորումների ազգային, ոլորտային կամ եվրոպական շրջանակներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ/բենչմարքներ, մասնագիտական, օրենսդիր ու ոլորտը կարգավորող համապա-

տասխան կառույցների պահանջներ և այլն)՝ դրանց հետ համադրելով ծրագրի ներկայիս նպատակն ու կրթական վերջնարդյունքները,

- համակողմանիորեն գնահատել կրթական ծրագրի իրականացման որակն ու ռեսուրսային ապահովվածությունը (դասախոսական, նյութական և այլն),
- գնահատել կրթական ծրագրի կառուցվածքում ու իրականացման գործընթացում ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների ազդեցությունը ծրագրի որակի վրա,
- հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,
- քննադատաբար վերլուծել կրթական ծրագիրը՝ դիտարկելով իրականացման ընթացքում նրա ուժեղ ու թույլ կողմերը, նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,
- հիմնավորել ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման նպատակահարմարությունը:

3.2. Ծրագրերի վերանայման ընթացակարգը

30. Կրթական ծրագրի ամբողջական գնահատումն ու պարբերական վերանայումը ապակենտրոնացված գործընթացներ են, որոնցում ներգրավվում են նաև արտաքին փորձագետներ:
31. Կրթական ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի սահմանված տևողությամբ ու հավատարմագրման գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման առաջընթացով և այլն:
32. Կրթական ծրագիրն անհրաժեշտ է վերանայել յուրաքանչյուր անգամ, երբ ծրագրի բովանդակային փոփոխությունները գերազանցում են նրա դասընթացների ընդհանուր աշխատածավալի 20 %-ը:
33. Վերանայման գործընթացն իրականացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը:
34. ԵՊՀ կրթական ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգն ամբողջությամբ համապատասխանում է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման

կարգում»[2] նկարագրված կրթական ծրագրերի մշակման, ներքին փորձաքննության ու վերջնական հաստատման ընթացակարգերին (բացառությամբ ծրագրի մշակման արտոնման փուլի):

[2] ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ, ԵՊՀ հրատ., Երևան, 2014:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

<u>ՀԱՎԵԼՎԱԾ 1.</u> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Ծրագրի մշտադիտարկման խումբը կազմում է հաշվետվությունը, որը հաստատվում է ֆակուլտետի խորհրդում (կենտրոնի/ինստիտուտի ղեկավարության նիստում), այնուհետև՝ ներկայացվում ՈԱԿ:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Կրթական ծրագրի մշտադիտարկման հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետ/կենտրոն/ինստիտուտ .....

Կրթական ծրագրի անվանումն ու մասնագիտության թվանիշը .....
.....

Շնորհվող որակավորումը .....

Կրթական մակարդակը (բակալավր, մագիստրոս).....

Ուսուցման ձևը (առկա, հեռակա) .....

Ծրագրի սկզբնական հաստատման տարեթիվը .....

Ծրագրի նախորդ մշտադիտարկման տարեթիվը .....

Ծրագրի նախորդ վերանայման տարեթիվը .....

1. Կրթական ծրագրի քանակական բնութագրերը

Ուսումնական տարի	2020/2021	2021/2022	2022/2023
Ընդունելությունը և ուսանողական համակազմը			
Դիմորդների թիվը			
Ընդունելության մրցութային ցուցանիշը և անցողիկ/ շեմային միավորը			
ԵՊՀ ընդունված դիմորդների թիվն ու ընդունելության միջին միավորը			
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
«Գերազանց» «*Լավ»* «*Բավարար»* գնահատականների հաշվեկշիռը (%) դրական գնահատականների ընդհանուր թվում			
«Անբավարար» գնահատականների հաշվեկշիռը (%) գնահատականների ընդհանուր թվում			
Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումա-րային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)			
ԵՊՀ-ից դուրս մնացած/ազատված ուսանողների թիվը/հաշվեկշիռը (%)			
Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ			
Շրջանավարտների թիվը			
Ըստ ամփոփիչ ատեստավորման՝ *«Գերազանց»* «*Լավ»* «*Բավարար»* գնահատականների հաշվեկշիռը (%) դրական գնահատականների ընդհանուր թվում			
«Անբավարար» գնահատականների հաշվեկշիռը (%) գնահատականների ընդհանուր թվում			
Կրթական հաջորդ մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը (ներառել նախորդ ուստարվա արդյունքները)			
Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտներում աշխատանքի անցած շրջանավարտների հաշվեկշիռը (%, ներառել նախորդ ուստարվա արդյունքները)			

2. Ուսանողական հարցումների արդյունքները[3]

Ներկայացվում են վերջին 4 կիսամյակների ընթացքում կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները (դասընթացի մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության ու գնահատման կիրառվող մեթոդների և դրանց արդյունավետության, դասընթացների բովանդակության ու օգտակարության վերաբերյալ), ինչպես նաև նախորդ 4 ուստարիների ընթացքում ուսանողների կողմից պարբերաբար բարձրացված (կրկնվող) խնդիրները, որոնք վերաբերում են առանձին դասընթացների որակին, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները: Առանձնակի ուշադրություն է հատկացվում վերջին 4 կիսամյակում 3,75 միավորից անընդմեջ ցածր գնահատված դասընթացներին, որոնց համար ներկայացվում է բարելավման միջոցառումների ծրագիր:

Կիսամյակում ծրագրի բոլոր դասընթացների ընդհանրացված գնահատականն ըստ առանձին հարցերի				
Գնահատման հարցը	2020/2021 2-րդ կիսամյակ	2021/2022 1-ին կիսամյակ	2021/2022 2-րդ կիսամյակ	2022/2023 1-ին կիսամյակ
1. Դասընթացների նյութը մատուցվում էր պարզ ու հասկանալի:				
2. Դասընթացներն ապահովված էին ուսումնական ու մեթոդական անհրաժեշտ (ներառյալ էլեկտրոնային) նյութերով:				
3. Դասընթացներին ուսանողների մասնակցությունն ու ներգրավվածությունը օժանդակվում էին:				
4. Խթանվում էր ուսանողների վերլուծական ու քննական մտածողությունը:				
5. Ուսանողների գիտելիքները օբյեկտիվ էին գնահատվում:				
6. Տրամադրվում էր լրացուցիչ (ներառյալ առցանց) խորհրդատվություն՝ դասընթացներին վերաբերող հարցերը քննարկելու համար:				
7. Դասընթացներին հատկացված ժամանակն արդյունավետ էր օգտագործվում:				
8. Դասընթացների օգտակարությունը ուսանողների համար				

Վերջին 4 ուստարում (2019-2020/2022-2023) ուսանողների կողմից պարբերաբար բարձրացված/կրկնվող խնդիրները	Ի՞նչ է առաջարկվում խնդրի լուծման համար:
Խնդիր 1	
Խնդիր 2	
Խնդիր 3	
Խնդիր 4	
Խնդիր 5	
Խնդիր 6	

[3] 2023-2024 ուսումնական տարվանից ուսանողական հարցումներն անցկացվելու են ըստ 4-րդ ու 5-րդ հավելվածներում ներկայացված հարցաշարերի, որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են փոփոխվել:

Խնդիր 7	
Խնդիր 8	

Վերջին 2 տարում 3,75 միավորից անընդմեջ ցածր գնահատված դասընթացները	
Դասընթացը	Ի՞նչ է առաջարկվում դասընթացի որակի բարելավման համար:
Դասընթաց 1	
Դասընթաց 2	
Դասընթաց 3	
Դասընթաց 4	
Դասընթաց 5	
Դասընթաց 6	
Դասընթաց 7	
Դասընթաց 8	

3. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են կրթական ծրագրի՝ նախորդ երկու տարիների շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վերաբերում են կրթական ծրագրի համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջներին, ծրագրի բովանդակությանը, դասավանդման ու ուսուցման ընտրված մեթոդաբանությանը, գիտելիքների գնահատմանը, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության առկա ռեսուրսներին: Ներկայացվում են նաև նախորդ 2 ուստարիների ընթացքում շրջանավարտների կողմից ծրագրի որակին առնչվող ու պարբերաբար բարձրացված (կրկնվող) խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները:

Շրջանավարտների ընդհանրացված գնահատականն ըստ առանձին հարցերի		
Գնահատման հարցը	2020/2021 ուստարի	2021/2022 ուստարի
1. Որքանո՞վ է կրթական ծրագիրը նպաստում մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը:		
2. Ինչպե՞ս եք գնահատում կրթական ծրագիրը տեսական գիտելիքներ տալու առումով:		
3. Ինչպե՞ս եք գնահատում կրթական ծրագիրը գործնական հմտություններ տալու առումով:		
4. Որքանո՞վ են ընդհանուր առմամբ օգտակար ծրագրում մատուցվող դասընթացները:		
5. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը:		
6. Ձեր գիտելիքները որքանո՞վ են օբյեկտիվ գնահատվել:		

7. Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանություն) օբյեկտիվությունը:		
8. Որքանո՞վ եք բավարարված ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի ղեկավարի աշխատանքից:		

Վերջին 2 ուստարում (2020-2021/2021-2022) շրջանավարտների կողմից պարբերաբար բարձրացված/կրկնվող խնդիրները	Ի՞նչ է առաջարկվում խնդրի լուծման համար:
Խնդիր 1	
Խնդիր 2	
Խնդիր 3	
Խնդիր 4	
Խնդիր 5	
Խնդիր 6	
Խնդիր 7	
Խնդիր 8	

4. Ծրագրի մյուս շահառուների արձագանքը

Ծրագրի հիմնական շահառուների արձագանքը ստանալու նպատակով ՈԱԿ-ի հատուկ մասնագիտական խումբն իրականացնում է ֆոկուսխմբային հետազոտություն (ՖԽՀ) մշտադիտարկման ենթակա ծրագրերում ընդգրկված ավարտական կուրսի ուսանողների մասնակցությամբ: ՖԽՀ մոդերատորը նախապես պատրաստված հարցաշարի օգնությամբ իրականացնում է հարցում՝ պարզելու ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրից՝ ըստ առանձին ասպեկտների, մասնավորապես նրանց կարծիքն ու նկատառումները ծրագրի բովանդակության ու իրականացման ընթացքի, ձեռք բերած կրթական վերջնարդյունքների (ԿՎ), դասախոսական կազմի, դասավանդման ու ուսուցման կիրառվող մեթոդների, գիտելիքների գնահատման գործընթացի, ինքնուրույն աշխատանքների ու պրակտիկաների, ծրագրի ռեսուրսային ապահովվածության և այլնի վերաբերյալ:

Մոդերատորը ՖԽՀ տվյալների հիման վրա կազմում է տվյալ ծրագրի ՖԽՀ արձանագրությունը և փոխանցում ՈԱԿ-ի կողմից նշանակված փորձագետին: Վերջինս վերլուծում է արձանագրությունը և ՖԽՀ արդյունքների վերաբերյալ կազմում վերլուծական զեկույց, որում պարտադիր ներառվում են հետևյալ բաժինները՝

1. Մասնագիտության (կրթական ծրագրի) ընտրության շարժառիթներն ու գոհունակությունը ավարտական փուլում,
2. Կրթական ծրագրի հիմնական ուժեղ ու թույլ կողմերը,

3. Կարևորագույն կրթական վերջնարդյունքների (ԿՎ) ձեռքբերման աստիճանը (ԿՎ-ների ձեռքբերումը գնահատող արդյունարար թերթիկը կցվում է),
4. Ինքնուրույն ու ավարտական աշխատանքը,
5. Պրակտիկան,
6. Դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը,
7. Դասախոսական կազմը,
8. Ուսումնական միջավայրն ու ռեսուրսները,
9. Առաջարկություններ (փոփոխություններ):

Կրթական ծրագրի մշտադիտարկման խումբն ուսումնասիրում է ՖԽՀ վերլուծական զեկույցը և առկա տեղեկատվությունն օգտագործում՝ մշտադիտարկման զեկույցը, ծրագրի SWOT-ն ու բարելավող միջոցառումների պլանը կազմելու համար:

5. Համագործակցային կապերն ու պրակտիկան

Գնահատվում են ծրագիրը սպասարկող ուսումնական այլ ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ, ինստիտուտներ) և արտաքին շահակիցների (հիմնական գործատու կազմակերպություններ, մասնագիտական/ոլորտային ընկերակցություններ, պետական կառույցներ ու հիմնարկներ) հետ համագործակցության ձևերն ու արդյունքները:

Հատուկ ուշադրություն է հատկացվում պրակտիկաների անցկացման վայր հանդիսացող ձեռնարկությունների ու կազմակերպությունների հետ համագործակցության և մասնագիտական պրակտիկայի արդյունավետության գնահատմանը: Մշտադիտարկման խումբը ներկայացնում է պրակտիկաների անցկացման հիմնական վայրերի ցանկը և գնահատում պրակտիկաների արդյունավետությունը՝ ըստ սեփական դիտարկումների ու ուսանողների գոհունակության (շրջանավարտների բավարարվածության հարցումներ, ֆոկուսխմբային հետազոտության արդյունքներ և այլն):

Թիվ	Պրակտիկայի վայրը	Գնահատականը				
		դժվար է գնահատել	գերազանց	լավ	բավարար	անբավարար
1.	Ձեռնարկություն/կազմակերպություն 1					

2.	Ձեռնարկություն/կազմակերպություն 2					
3.	Ձեռնարկություն/կազմակերպություն 3					
4.	Ձեռնարկություն/կազմակերպություն4					
5.	Ձեռնարկություն/կազմակերպություն 5					
6.	Ձեռնարկություն/կազմակերպություն 6					
7.	Ձեռնարկություն/կազմակերպություն 7					
8.	Ձեռնարկություն/կազմակերպություն 8					

6. Կրթական ծրագրի փոփոխությունները

Ներկայացվում են նախորդ մշտադիտարկումից հետո կրթական ծրագրում կատարված փոփոխությունները, և գնահատվում են դրանց իրականացման արդյունքները:

Ծրագրում կատարված փոփոխությունները	Նպատակը	Վերջնարդյունքը
Փոփոխություն 1		
Փոփոխություն 2		
Փոփոխություն 3		
Փոփոխություն 4		
Փոփոխություն 5		
Փոփոխություն 6		
Փոփոխություն 7		
Փոփոխություն 8		

7. Կրթական ծրագրի նախորդ մշտադիտարկման, վերանայման և/կամ արտաքին գնահատման տվյալների հիման վրա ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը

Ներկայացվում են վերջին անգամ կրթական ծրագրի մշտադիտարկման, վերանայման և/կամ արտաքին գնահատման (հավատարմագրման) ժամանակ ծրագրի բարելավման ուղղությամբ արված եզրակացությունների (պահանջների,

առաջարկությունների, երաշխավորությունների) իրականացման ուղղությամբ ձեռնարկված պատասխան միջոցառումներն ու դրանց կատարողականը: Գնահատվում են բարելավման նախորդ պլանով նախատեսված բոլոր միջոցառումները/գործողությունները: Բացահայտվում են այն դեպքերը, երբ այդ միջոցառումները չեն կատարվել, և պարզաբանվում են դրանց պատճառները:

Թիվ	Միջոցառում (գործողություն)	Կատարողականը*	Պատասխանատու անձը	Ծանոթություն/պարզաբանում
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				

** «Կատարված է ամբողջությամբ», «կատարված է մասամբ», «կատարված չէ»:*

8. Կրթական ծրագրի ուժեղ ու թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը

Վերլուծվում են հիմնական միտումները՝ կրթական ծրագրի ընդունելության ու ուսանողական համակազմի, ուսումնական առաջադիմության, դասավանդման արդյունավետության (ըստ ուսանողական և ՖԽՀ հարցումների արդյունքների), ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, ծրագրից ուսանողների բավարարվածության (ըստ շրջանավարտների ու ՖԽՀ հարցումների արդյունքների), ծրագրի շրջանավարտների զբաղվածության և այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Մեկնաբանվում են ծրագրի մշակման ժամանակ սահմանված նպատակներից ու վերջնարդյունքներից շեղումները, գնահատվում են ծրագրի արդիականությունն ու պահանջարկը աշխատաշուկայի և ուսանողների կողմից:

Այս վերլուծության հիման վրա արվում են եզրակացություններ կրթական ծրագրի պահանջարկվածության ու կենսունակության, ուսանողական թվակազմի,

դասավանդման ու ուսումնառության որակի ու վերջինիս ապահովման համար անհրաժեշտ նյութական, տեխնոլոգիական, մեթոդական, մարդկային (դասախոսական ու ուսումնաօժանդակ) առկա ռեսուրսների համարժեքության վերաբերյալ, ինչը հիմք է հանդիսանալու ծրագրի բարելավմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման համար:

Կազմվում է ծրագրի ուժեղ ու թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների ու վտանգների (SWOT) աղյուսակը:

Կրթական ծրագրի SWOT աղյուսակը

SWOT գործոնը	Փաստացի վկայություն	Առաջարկություններ լավագույն փորձի զարգացման և տարածման, հնարավորությունների օգտագործման վերաբերյալ	Առաջարկություններ թույլ կողմերի շտկման և վտանգների չեզոքացման կամ մեղմացման վերաբերյալ
Ուժեղ կողմերը 1. 2. 3. 4. 5.			
Թույլ կողմերը 1. 2. 3. 4. 5.			
Հնարավորությունները 1. 2. 3. 4. 5.			

Վտանգները 1. 2. 3. 4. 5.			

9. Ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը

Ըստ ծրագրի կատարողականի ու SWOT վերլուծության արձանագրած տվյալների՝ կազմվում է կրթական ծրագրի որակի բարելավման/բարձրացման ուղղությամբ ուսումնական ստորաբաժանման (ամբիոնի, ֆակուլտետի, կենտրոնի, ինստիտուտի) ու համալսարանի կենտրոնական վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը հաջորդ երկու ուստարիների համար:

Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/գործողությունը	Պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			
9.			

10.			

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի, ինստիտուտի տնօրեն)՝ .....

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մշտադիտարկման վերաբերյալ

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Մշտադիտարկման արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ..... ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի, ինստիտուտի) որակի ապահովման հանձնաժողովի նիստում *(որոշում թիվ ..... , ... ամսաթիվ):*

Որակի ապահովման հանձնաժողովի նախագահ՝ .....

Մշտադիտարկման արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ..... ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի, ինստիտուտի ղեկավարության նիստի) կողմից (*որոշում թիվ .....,* ..... *ամսաթիվ*):

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի, ինստիտուտի տնօրեն)՝ .....

Մշտադիտարկման հաշվետվությունը ստուգվել է ԵՊՀ ՈԱԿ-ի կողմից:

ՈԱԿ տնօրեն՝ .....

<u>ՀԱՎԵԼՎԱԾ 2.</u> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ [4]

20 դեկտեմբերի	• ԿԾ-ների կրթական վերջնարդյունքների (ԿՎ) գնահատման քարտերի պատրաստում
20 հունվարի	• ԿԾ-ների ֆոկուսխմբային հետազոտության (ՖԽՀ) մոդերատորների կազմի ստեղծում
30 հունվարի	• ԿԾ-ների մշտադիտարկման խմբերի (ՄԽ) ստեղծում
31 մայիսի	• ԿԾ-ների ՖԽՀ-ների իրականացում
31 հուլիսի	• ՖԽՀ-ների զեկույցների կազմում ու տրամադրում ՄԽ-ներին
30 սեպտեմբերի	• ԿԾ-ների մշտադիտարկման իրականացում
31 հոկտեմբերի	• ԿԾ-ների մշտադիտարկման հաշվետվությունների (ՄՀ) կազմում
15 նոյեմբերի	• ՄՀ-ների վերաբերյալ եզրակացության կազմում ու ներկայացում ՈՒՍ ղեկավարին
15 դեկտեմբերի	• ՈՒՍ բոլոր ծրագրերի մշտադիտարկման ամփոփ հաշվետվության կազմում
30 դեկտեմբերի	• Մշտադիտարկման արդյունքների քննարկում ՈՒՍ ԳԽ կամ ղեկավարության նիստում ու որոշման կայացում
15 հունվարի	• ՈՒՍ բոլոր ծրագրերի ՄՀ-ների ու ամփոփ հաշվետվության ներկայացում ՈԱԿ
15 փետրվարի	• Սահմանված չափանիշներին ՄՀ-ների համապատասխանության ստուգում
31 մարտի	• ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման համապարփակ զեկույցի կազմում
15 ապրիլի	• Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկուցում ԵՊՀ ԳԽ-ին և ռիսկային ծրագրերի վերաբերյալ որոշման կայացում
30 ապրիլի	• Կրթական ծրագրերի բարելավման պլանների ու ժամանակացույցների հաստատում

[4] Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը: